Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Պ-104-30.11.2021-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կրթության մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.11-րդ, 1.12-րդ 1.13-րդ, 1.14-րդ, 1.15-րդ, 1.16-րդ, 1.17-րդ եւ 1.18-րդ կետերով.

«1.11) ուսուցման ազգային ռեեստր՝ լրացուցիչ կրթական ծրագրերի եւ դասընթացների, ուսուցում իրականացնողների, դասընթացներին մասնակցած, գնահատված եւ վկայագրված անձանց, ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատում և ճանաչում անցած անձանց, ինչպես նաեւ լրացուցիչ կրթական ծրագրերի, դասընթացների ընթացքի նկատմամբ մոնիտորինգ իրականացնող, ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսումնառության արդյունքները գնահատող անձանց տվյալների ազգային շտեմարան՝ անձնական տվյալների պաշտպանության օրենսդրության պահանջներին համապատասխան,

1.12) համեմատելի չափանիշներ՝ որոշակի մասնագիտության չափորոշչի կամ ծրագրի ուսումնառության արդյունքներով, զբաղմունքի նկարագրով կամ պաշտոնի անձնագրով սահմանված որոշակի կարողությանը ներկայացվող պահանջներ.

1.13) ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատում եւ ճանաչում՝ անձի կարողությունների եւ սահմանված որոշակի համեմատելի չափանիշների համապատասխանության փաստը պաշտոնապես հավաստելու գործընթաց,

1.14) անձի փաստացի կարողություններ՝ անձի որոշակի գիտելիքներ, կարողություններ, ընկալումներ ու հմտություններ՝ անկախ դրանք ձեռք բերելու եղանակից,

1.15) գնահատում՝ անձի փաստացի կարողությունները հավաստող վկայությունները սահմանված չափանիշներին համապատասխանության համադրության գործընթաց:

1.16) ուսումնառություն՝ ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ միջավայրում տեղի ունեցող գործընթաց, որի միջոցով անձը յուրացնում է տեղեկություններ, գաղափարներ և արժեքներ՝ արդյունքում ձեռք բերելով գիտելիք, կարողություն, հմտություններ կամ փորձառություն.

1.17) պատվիրատու՝ պետական մարմին կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ով հայտագրել է որոշակի գիտելիք, կարողություն, հմտություն ձեռք բերելու, կատարելագործելու, լրացնելու, արդիականացնելու ցանկությունը կամ անհատական ու որոշակի խմբի կարիքը,

1.18) մուտքային պահանջ՝ լրացուցիչ կրթական ծրագրի մասնակցի համար պատվիրատուի սահմանած կրթության որոշակի աստիճանի, զբաղմունքի, կարողության, իմացության, ստաժի և այլ առանձնահատուկ նախապայմանների առկայություն. »:

Հոդված 2. Օրենքի 26-րդ հոդվածը՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ից 3.8-րդ մասերով.

«3.1. Լրացուցիչ կրթություն (ուսուցում) կարող է իրականացնել ուսուցման ազգային ռեեստրում՝ որպես ուսուցում իրականացնող գրանցված ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ: Ուսումնական հաստատությունները և միջազգային հավատարմագրում ունեցող ուսումնական կենտրոնները իրենց կրթական ծրագրերի շրջանակում կարող են ուսուցման ազգային ռեեստրում գրանցվել պարզեցված ընթացակարգով:

3.2. Լրացուցիչ կրթական ծրագրին մասնակցելու իրավունք ունի յուրաքանչյուր ոք, եթե բավարարում է տվյալ դասընթացի մուտքային պահանջները:

3.3. Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման, իրականացման եւ վկայագրման գործընթացը համակարգում, ինչպես նաեւ ուսուցման ազգային ռեեստրը վարում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով ընտրված կազմակերպությունը:

3.4. Լրացուցիչ կրթական ծրագրերը կազմակերպվում, իրականացվում եւ վկայագրվում են հետեւյալ փուլերով.

1) կատարելագործելու, լրացնելու, արդիականացնելու, նոր ձեռք բերելու ենթակա կարողությունների, գիտելիքների ու հմտությունների կարիքի գնահատում՝ ըստ մասնակցի նպատակների, պատվիրատուի կարիքների եւ պաշտոնի նկարագրի պահանջների,
2) պատվերի կամ առաջարկության հայտագրում,
3) լրացուցիչ կրթական ծրագրի փորձաքննություն՝ ըստ հայտագրված պատվերի կամ առաջարկության,
4) լրացուցիչ կրթական ծրագրի երաշխավորություն՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից,
5) իրականացնող երաշխավորված կազմակերպության (կամ անհատի) ընտրություն՝ պատվիրատուի կամ մասնակիցների (ունկնդիրների) ազատ ընտրությամբ,
6) երաշխավորված լրացուցիչ կրթական ծրագրի իրականցման ընթացքի մշտադիտարկում՝ ուսուցման ազգային ռեեստրում ընդգրկված անկախ մասնագիտներից ձևավորված մասնագիտական խմբի կողմից,
7) վկայագրում՝ պետական նմուշի միանական փաստաթղթի (վկայական եւ ներդիր) շնորհում՝ երաշխավորված լրացուցիչ կրթական ծրագրով սահմանված ուսումնառության արդյունքները ձեռք բերած մասնակցին (ունկնդրին):

Վկայականի ներդիրը համարվում է տվյալ փաստաթղթի անբաժանելի մասը եւ առանց վկայականի վավեր չէ:

3.5. Լրացուցիչ կրթության վկայականի, վկայականի ներդիրի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման եւ պահպանման կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

3.6. Լրացուցիչ կրթական ծրագրի կազմակերպման կամ իրականացման գործընթացում սույն հոդվածի 3.4-րդ մասի 6-րդ կետով սահմանված գործընթացում խախտումներ արձանագրվելու դեպքում լրացուցիչ կրթական ծրագիր իրականացնողը պարտավոր է սահմանված ժամկետում վերացնել արձանագրված խախտումը: Եթե սահմանված ժամկետում խախտումը չի վերացվում, ապա մինչև երկու տարի ժամանակով ապաակտիվացվում է Ուսուցումների ազգային ռեեստրում լրացուցիչ կրթական ծրագիր իրականացնողի բազաների (հաշվառման համարանիշի) օգտագործումը:

Սույն մասի կիրառման համար հիմք հանդիսացող խախտումների տեսակները, դրանք վերացնելու ժամկետները, ինչպես նաև Ուսուցումների ազգային ռեեստրում լրացուցիչ կրթական ծրագիր իրականացնողի բազաների (հաշվառման համարանիշի) օգտագործումը ապաակտիվացնելու և վերաակտիվացնելու կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

3.7. Սույն հոդվածի 3.1-րդ, 3.2-րդ եւ 3.4-րդ մասով սահմանված փուլերը պարտադիր են այն կազմակերպությունների եւ մասնակիցների (ունկնդիրների) համար, ովքեր՝

1) ցանկանում են ստանալ պետական նմուշի միասնական փաստաթուղթ,

2) ցանկանում են կատարել այնպիսի աշխատանք կամ զբաղեցնել այնպիսի պաշտոն, որի համար օրենքներով սահմանված է մասնագիտական ուսուցման վկայական կամ դրան հավասարեցված փաստաթուղթ ունենալ պահանջը:

3.8. Պետական նմուշի միասնական փաստաթուղթ (վկայական եւ ներդիր) ստացած անձինք գրանցվում են ուսուցման ազգային ռեեստրում:»:

2) Օրենքի 4-րդ մասից հանել «ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման կարգը» և «Հայաստանի Հանրապետության» բառերը :

Հոդված 3. Օրենքը լրացնել 26.1-րդ հոդված՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 26.1. Ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատումը եւ ճանաչումը

1. Ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատումը եւ ճանաչումը կամավոր գործընթաց է, որը կազմակերպվում, իրականացվում և հավաստագրվում է սույն օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դրույթներով:

2. Ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացնում են ուսուցման ազգային ռեեստրում գրանցված կազմակերպության մասնագետները կամ ֆիզիկական անձինք (գնահատողներ)՝ սահմանված պահանջներին համապատասխանելու եւ տվյալ մասնագիտական խմբում ընդգրկվելու միջոցով:

3. Ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսումնառության արդյունքների ճանաչման համակարգով գնահատված ու ճանաչված արդյունքները կարող են հիմք հանդիսանալ աշխատաշուկա մուտք գործելու եւ կոնկրետ աշխատանք կատարելու կամ զբաղմունք իրականացնելու համար:

4. Ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսումնառության արդյունքները գնահատելու, ճանաչելու, հավաստագրելու աշխատանքների կազմակերպման եւ իրականացման գործընթացը համակարգում, ինչպես նաեւ ուսուցման ազգային ռեեստրը վարում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով ընտրված կազմակերպությունը:

5. Ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատումը, ճանաչումը եւ հավաստագրումը կազմակերպվում ու իրականացվում է հետեւյալ փուլերով.

1) թեկնածուի հայտի գնահատման եւ ճանաչման գործընթացը,

2) անձի գիտելիքների, փաստացի կարողությունների եւ որոշակի համեմատելի չափանիշների համապատասխանության համադրում, գնահատում,

4) ընդհանրական գնահատում, եզրակացություն,

5) գնահատման արդյունքների պաշտոնական ճանաչում եւ հավաստագրում՝ պետական նմուշի միասնական փաստաթղթի (հավաստագրի եւ ներդիրի) շնորհում:

Հավաստագրի ներդիրը համարվում է տվյալ փաստաթղթի անբաժանելի մասը եւ առանց հավաստագրի վավեր չէ:

6.Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանում է կառավարությունը:

7. Հավաստագրի եւ հավաստագրի ներդիրի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման եւ պահպանման կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

8. Պետական նմուշի միասնական փաստաթուղթ (հավաստագիր եւ ներդիր) ստացած անձինք գրանցվում են ուսուցման ազգային ռեեստրում:»:

Հոդված 4. Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 6.1-րդ կետը «կարգը» բառից հետո լրացնել «, ներառյալ պետական նմուշի վկայականի եւ դրա ներդիրի ձեւը.»,

2) 6.2-րդ կետում «ուսուցման» բառը փոխարինել «ուսումնառության» բառով, իսկ «կարգը» բառից հետո լրացնել «, ներառյալ պետական նմուշի հավաստագրի եւ դրա ներդիրի ձեւը.»:

Հոդված 5. Օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 9.1-րդ, 9.2-րդ, 9.3-րդ, 9.4-րդ, 9.5-րդ, 9.6-րդ, 9.7-րդ, 9.8-րդ, 9.9-րդ եւ 12.1-րդ կետերով.

9.1) հավաստում է անձի կարողությունների եւ սահմանված որոշակի համեմատելի չափանիշների համապատասխանության փաստը՝ սույն օրենքով սահմանված ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման գործընթացների միջոցով,

9.2) սահմանում է սույն օրենքի 36-րդ հոդվածի 6.1-րդ եւ 6.2-րդ կետերով սահմանված կարգերի գործարկումը համակարգող, կազմակերպող ու օժանդակող կազմակերպության ընտրության կարգը եւ ըստ սահմանված պահանջների ընտրում համապատասխան կազմակերպությունը, որը հանդես է գալիս սոցիալական գործընկերների անունից (պետություն, գործատուներ եւ արհմիություններ).

9.3) սահմանում է ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման եւ ճանաչման ենթակա մասնագիտությունների ցանկը եւ դրանց ներդման ժամանակացույցը՝ ըստ որակավորման աստիճանների.

9.4) ստեղծում է ուսուցման ազգային ռեեստրը՝ ընտրված համակարգող կազմակերպության հետ պայմանագրային պատվիրակման հիման վրա.

9.5) հաստատում է ուսուցման ազգային ռեեստրի վարման կարգը, այդ թվում՝ սույն օրենքի 3.4-րդ մասի 6-րդ կետով սահմանված գործընթացում արձանագրված խախտումների տեսակները, դրանք վերացնելու ժամկետները, ինչպես նաև Ուսուցումների ազգային ռեեստրում լրացուցիչ կրթական ծրագիր իրականացնողի բազաների (հաշվառման համարանիշի) օգտագործումը ապաակտիվացնելու և վերաակտիվացնելու կարգը,

9.6) սահմանում է լրացուցիչ կրթության վկայականի, վկայականի ներդիրի եւ հավաստագրի, հավաստագրի ներդիրի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման եւ պահպանման կարգը.

9.7) երաշխավորում է լրացուցիչ կրթության մոդուլային ծրագրերը.

9.8) հաստատում է ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատում եւ ճանաչում անցկացնող գնահատողների ցանկը.

9.9) հաստատում է ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատում եւ ճանաչում անցած անձանց ցանկը եւ վավերացնում տրամադրվող հավաստագիրն ու ներդիրը.

9.10)սահմանում է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման գործընթացի կազմակերպման, իրականացման, ճանաչման եւ հավաստագրման ընթացակարգային և մեթոդաբանական փաստաթղթերը, գնահատողներին և գնահատում իրականացնելու կենտրոններին ներկայացվող պահանջները, կողմերի իրավահարաբերություններն ապահովող պայմանագրի հիմնական պայմանները, գործընթացի կողմերի գործառույթները, լիազորությունները եւ պարտականությունները:

12.1) սահմանում է հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, հաշվառման և պահպանման կարգերը:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 7. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված 26-րդ հոդվածի 3.7-րդ մասի 2-րդ կետը ուժի մեջ են մտնում սկսած 2023 թվականի սեպտեմբերի 1-ից՝ ըստ ոլորտների (բնագավառների) կառավարության սահմանած ժամանակացույցին համապատասխան, բայց ոչ ուշ քան 2025 թվականի հունվարի 1-ը:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման, ճանաչման եւ հավաստագրման գործընթացը ներդրվում է համաձայն կառավարության հաստատած գործողությունների պլանի եւ ժամանակացույցի՝ սկսած 2024 թվականի հունվարի մեկից՝ տարեկան առնվազն 3 մասնագիտության (զբաղմանքի) համար:

3. Սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նոր խմբագրությամբ օրենքի 36-րդ եւ 37-րդ հոդվածներով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման ժամկետ սահմանել մինչեւ 2023 թվականի հունիսի 1-ը:

(Պ-104-30.11.2021-ԳԿ-011/1)

~~ՆԱԽԱԳԻԾ~~Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կրթության մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.11-րդ, 1.12-րդ 1.13-րդ, 1.14-րդ, ~~եւ~~ 1.15-րդ, ***1.16-րդ, 1.17-րդ եւ 1.18-րդ*** կետերով.

«1.11) ուսուցման ազգային ռեեստր՝ լրացուցիչ կրթական ծրագրերի եւ դասընթացների, ուսուցում իրականացնողների, դասընթացներին մասնակցած, գնահատված եւ վկայագրված անձանց, ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ***~~ուսուցման~~ ուսումնառության արդյունքների գնահատում ~~ված~~ ու ~~և~~ ճանաչում անցա~~ված~~ծ*** անձանց, ինչպես նաեւ լրացուցիչ կրթական ծրագրերի, դասընթացների ընթացքի ***նկատմամբ*** մոնիտորինգ իրականացնող, ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ***ուսումնառության*** արդյունքները գնահատող անձանց տվյալների ազգային շտեմարան՝ ***անձնական տվյալների պաշտպանության օրենսդրության պահանջներին համապատասխան,***

1.12) համեմատելի չափանիշներ՝ որոշակի մասնագիտության չափորոշչի կամ ծրագրի ուսումնառության արդյունքներով, զբաղմունքի նկարագրով կամ պաշտոնի անձնագրով սահմանված որոշակի կարողությանը ներկայացվող պահանջներ.

1.13) ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ***ուսումնառության*** արդյունքների գնահատում եւ ճանաչում՝ ~~կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից~~ անձի կարողությունների եւ սահմանված որոշակի համեմատելի չափանիշների համապատասխանության փաստը ***պաշտոնապես*** հավաստելու գործընթաց,

1.14) անձի փաստացի կարողություններ՝ անձի որոշակի գիտելիքներ, կարողություններ, ընկալումներ ու հմտություններ՝ անկախ դրանք ձեռք բերելու եղանակից,

1.15) գնահատում՝ անձի ***փաստացի*** կարողությունները հավաստող վկայությունները սահմանված չափանիշներին համապատասխանության համադրության գործընթաց:

1.16) ուսումնառություն՝ ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ միջավայրում տեղի ունեցող գործընթաց, որի միջոցով անձը յուրացնում է տեղեկություններ, գաղափարներ և արժեքներ՝ արդյունքում ձեռք բերելով գիտելիք, կարողություն, հմտություններ կամ փորձառություն.

1.17) պատվիրատու՝ պետական մարմին կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ով հայտագրել է որոշակի գիտելիք, կարողություն, հմտություն ձեռք բերելու, կատարելագործելու, լրացնելու, արդիականացնելու ցանկությունը կամ անհատական ու որոշակի խմբի կարիքը,

1.18) մուտքային պահանջ՝ լրացուցիչ կրթական ծրագրի մասնակցի համար պատվիրատուի սահմանած կրթության որոշակի աստիճանի, զբաղմունքի, կարողության, իմացության, ստաժի և այլ առանձնահատուկ նախապայմանների առկայություն. »:

Հոդված 2. Օրենքի 26-րդ հոդվածը՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ից 3.~~7~~8-րդ մասերով.

«3.1. Լրացուցիչ կրթություն (ուսուցում) կարող է իրականացնել *ուսուցման ազգային ռեեստրում՝ որպես ուսուցում իրականացնող գրանցված* ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ~~ձ, որը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով գրանցվել է ուսուցման ազգային ռեեստրում~~: Ուսումնական հաստատությունները *և միջազգային հավատարմագրում ունեցող ուսումնական կենտրոնները* իրենց կրթական ծրագրերի շրջանակում կարող են ուսուցման ազգային ռեեստրում գրանցվել ~~*առանց նախապայմանների*~~*պարզեցված ընթացակարգով*:

3.2. Լրացուցիչ կրթական ծրագրին մասնակցելու իրավունք ունի յուրաքանչյուր ոք, եթե բավարարում է տվյալ դասընթացի մուտքային պահանջները: ~~Բացառություն կարող են կազմել այն դեպքերը, երբ պատվիրատուն առաջադրում է որոշակի նպատակ՝ որոշակի շրջանակի մասնակիցների (ունկնդիրների) համար:~~

3.3. Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման, իրականացման եւ վկայագրման գործընթացը համակարգում, ինչպես նաեւ ուսուցման ազգային ռեեստրը վարում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով ընտրված կազմակերպությունը:

3.4. Լրացուցիչ կրթական ծրագրերը կազմակերպվում, իրականացվում եւ վկայագրվում են հետեւյալ փուլերով.

8) կատարելագործելու, լրացնելու, արդիականացնելու, նոր ձեռք բերելու ենթակա կարողությունների, գիտելիքների ու հմտությունների կարիքի գնահատում՝ ըստ մասնակցի նպատակների, ~~*կազմակերպության պատասխանատուի (գործատուի)*~~*պատվիրատուի* կարիքների եւ պաշտոնի նկարագրի պահանջների,

~~8)~~9) պատվերի կամ առաջարկության հայտագրում,

~~9)~~10) լրացուցիչ կրթական ծրագրի փորձաքննություն՝ ըստ հայտագրված պատվերի կամ առաջարկության,

~~10)~~11) լրացուցիչ կրթական ծրագրի երաշխավորություն՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից,

~~11)~~12) իրականացնող երաշխավորված կազմակերպության (կամ անհատի) ընտրություն՝ պատվիրատուի կամ մասնակիցների (ունկնդիրների) ազատ ընտրությամբ,

~~12)~~13) երաշխավորված լրացուցիչ կրթական ծրագրի իրականցման ընթացքի մշտադիտարկում՝ ուսուցման ազգային ռեեստրում ընդգրկված անկախ մասնագիտների*գ ձևավորված մասնագիտական խմբի* կողմից,

~~13)~~14) վկայագրում՝ պետական նմուշի միանական փաստաթղթի (վկայական եւ ներդիր) շնորհում՝ երաշխավորված լրացուցիչ կրթական ծրագրով սահմանված ուսումնառության արդյունքները ձեռք բերած մասնակցին (ունկնդրին):

Վկայականի ներդիր~~ներ~~ը համարվում ~~*են*~~ *է* տվյալ փաստաթղթի անբաժանելի մասը եւ առանց վկայականի վավեր չէ:

3.5. Լրացուցիչ ~~ուսումնառության~~ կրթության վկայականի, վկայականի ներդիրի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման եւ պահպանման կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

3.6. Լրացուցիչ կրթական ծրագրի կազմակերպման կամ իրականացման գործընթացում սույն հոդվածի 3.4-րդ մասի 6-րդ կետով սահմանված ~~կարգով~~գործընթացում խախտումներ արձանագրվելու դեպքում լրացուցիչ կրթական ծրագիր իրականացնող պարտավոր է սահմանված ժամկետում վերացնել արձանագրված խախտումը: Եթե սահմանված ժամկետում խախտումը չի վերացվում, ապա մինչև երկու տարի ժամանակով ապաակտիվացվում է Ուսուցումների ազգային ռեեստրում լրացուցիչ կրթական ծրագիր իրականացնողի բազաների (հաշվառման համարանիշի) օգտագործումը:

Սույն մասի կիրառման համար հիմք հանդիսացող խախտումների տեսակները, դրանք վերացնելու ժամկետները, ինչպես նաև Ուսուցումների ազգային ռեեստրում լրացուցիչ կրթական ծրագիր իրականացնողի բազաների (հաշվառման համարանիշի) օգտագործումը ապաակտիվացնելու և վերաակտիվացնելու կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

3.~~6~~7. Սույն հոդվածի 3.1-րդ, 3.2-րդ եւ 3.4-րդ մասով սահմանված փուլերը պարտադիր են այն կազմակերպությունների եւ մասնակիցների (ունկնդիրների) համար, ովքեր՝

1) ցանկանում են ստանալ պետական նմուշի միասնական փաստաթուղթ,

2) ~~2~~ցանկանում են կատարել այնպիսի աշխատանք կամ զբաղեցնել այնպիսի պաշտոն, որի համար օրենքներով սահմանված է մասնագիտական ուսուցման վկայական կամ դրան հավասարեցված փաստաթուղթ ունենալ պահանջը:

3.~~7~~8. Պետական նմուշի միասնական փաստաթուղթ (վկայական եւ ներդիր) ստացած անձինք գրանցվում են ուսուցման ազգային ռեեստրում՝ ~~անհատական տվյալների պաշտպանության օրենսդրության պահանջներին համապատասխան:~~»:

2) Օրենքի 4-րդ մասից հանել «ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման կարգը» և «Հայաստանի Հանրապետության» բառերը :

Հոդված 3. Օրենքը լրացնել 26.1-րդ հոդված՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 26.1. Ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատումը եւ ճանաչումը

6. Ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ***ուսումնառության*** արդյունքների գնահատումը եւ ճանաչումը կամավոր գործընթաց է, որը ~~ի~~ կազմակերպվում, ~~ման,~~ իրականացվում~~ման,~~ ~~ճանաչման եւ~~ և հավաստագրվում է ~~ման~~ *~~սույն օրենքով և այլ ընթացակարգը, մասնակիցների գնահատման հիմքերը, գնահատման կենտրոններին ու գնահատողների ներկայացվող պահանջները, կողմերի իրավահարաբերություններն ապահովող պայմանագրի հիմնական պայմանները, գործընթացի կողմերի գործառույթները, լիազորությունները եւ պարտականությունները սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:~~նորմատիվ իրավական ակտերով սահմանված դրույթներով:*

7. Ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ***ուսումնառության*** արդյունքների գնահատումն իրականացնում են ուսուցման ազգային ռեեստրում գրանցված կազմակերպության մասնագետները կամ ֆիզիկական

անձինք (գնահատողներ)՝ սահմանված պահանջներին համապատասխանելու եւ տվյալ մասնագիտական խմբում ընդգրկվելու միջոցով:

8. Ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ***ուսումնառության*** արդյունքների ճանաչման համակարգով գնահատված ու ճանաչված արդյունքները կարող են ~~***բավարար նախապայման***~~***հիմք*** հանդիսանալ աշխատաշուկա մուտք գործելու եւ կոնկրետ աշխատանք կատարելու կամ զբաղմունք իրականացնելու համար: ~~Դա կարող է լինել ֆորմալ կրթությամբ իրականացվող մասնագիտության որեւէ կարողություն (կարողություններ), որը (որոնք) բավարար է (բավարար են) որոշակի աշխատանքի համար:~~

9. Ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսումնառության արդյունքները գնահատելու, ճանաչելու, հավաստագրելու աշխատանքների կազմակերպման եւ իրականացման գործընթացը համակարգում, ինչպես նաեւ ուսուցման ազգային ռեեստրը վարում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով ընտրված կազմակերպությունը:

10.Ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ***ուսումնառության*** արդյունքների գնահատումը, ճանաչումը ***եւ հավաստագրումը*** կազմակերպվում ու իրականացվում է հետեւյալ փուլերով.

1) թեկնածուի հայտի գնահատման եւ ճանաչման գործընթացը~~, որը ներառում է անհատի փորձառության որոշարկում՝ ինքնագնահատման եւ խորհրդատվության միջոցով~~,

2) անձի գիտելիքների, ~~կարողությունների ստուգում՝ թեստավորման եւ հարցազրույցի միջոցով.~~

~~3) անձի~~ փաստացի կարողությունների եւ որոշակի համեմատելի չափանիշների համապատասխանության համադրում, գնահատում,~~՝ բանավոր հարցումների, աշխատանքի կատարման ընթացքի դիտարկման, կատարած աշխատանքի արդյունքի քննման (վերլուծության) միջոցով.~~

4) ընդհանրական գնահատում, եզրակացություն~~՝ թեկնածուի կարողությունների եւ հմտությունների ճանաչում, որը հավաստվում է գնահատողների ընդհանրական եզրակացության հիման վրա,~~,

5) գնահատման արդյունքների պաշտոնական ճանաչում եւ հավաստագրում՝ պետական նմուշի միասնական փաստաթղթի (հավաստագրի եւ ներդիրի) շնորհում~~՝ ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսուցման արդյունքները արդյունքների գնահատվածում եւ դրական եզրակացություն ստացած անձին~~:

Հավաստագրի ներդիրը համարվում ~~են~~ է տվյալ փաստաթղթի անբաժանելի մասը եւ առանց հավաստագրի վավեր չէ:

6.***Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանում է կառավարությունը:***

7. Հավաստագրի եւ հավաստագրի ներդիրի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման եւ պահպանման կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

~~7~~8. Պետական նմուշի միասնական փաստաթուղթ (հավաստագիր եւ ներդիր) ստացած անձինք գրանցվում են ուսուցման ազգային ռեեստրում~~՝ անհատական տվյալների պաշտպանության օրենսդրության պահանջներին համապատասխան~~:»:

Հոդված 4. Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 6.1-րդ կետը «կարգը» բառից հետո լրացնել «, ներառյալ պետական նմուշի վկայականի եւ դրա ներդիրի ձեւը.»,

2) 6.2-րդ կետում ***«ուսուցման» բառը փոխարինել «ուսումնառության» բառով***, իսկ «կարգը» բառից հետո լրացնել «, ներառյալ պետական նմուշի հավաստագրի եւ դրա ներդիրի ձեւը.»:

Հոդված 5. Օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 9.1-րդ, 9.2-րդ, 9.3-րդ, 9.4-րդ, 9.5-րդ, 9.6-րդ, 9.7-րդ, 9.8-րդ, 9.9-րդ եւ *12.1-ին* կետերով.

9.1) *հավաստում է անձի կարողությունների եւ սահմանված որոշակի համեմատելի չափանիշների համապատասխանության փաստը՝ սույն օրենքով սահմանված ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման գործընթացների միջոցով,* ~~սահմանում է ոչ ֆորմալ եւ ինֆորմալ *ուսման* արդյունքների գնահատման եւ ճանաչման ենթակա մասնագիտությունների ցանկը եւ դրանց ներդման ժամանակացույցը՝ ըստ որակավորման աստիճանների.~~

9.2) սահմանում է սույն օրենքի 36-րդ հոդվածի 6.1-րդ եւ 6.2-րդ կետերով սահմանված կարգերի գործարկումը համակարգող, կազմակերպող ու օժանդակող կազմակերպության ընտրության կարգը եւ ըստ սահմանված պահանջների ընտրում համապատասխան կազմակերպությունը, որը հանդես է գալիս սոցիալական գործընկերների անունից (պետություն, գործատուներ եւ արհմիություններ).

9.3) սահմանում է ոչ ֆորմալ եւ ինֆորմալ *ուսումնառության* արդյունքների գնահատման եւ ճանաչման ենթակա մասնագիտությունների ցանկը եւ դրանց ներդման ժամանակացույցը՝ ըստ որակավորման աստիճանների.

9.~~3~~4) *ստեղծում է* ուսուցման ազգային ռեեստրը՝ ընտրված համակարգող կազմակերպության հետ պայմանագրային պատվիրակման հիման վրա. ~~հաստատում է ուսուցման ազգային ռեեստրի վարման կարգը~~

9.5) հաստատում է ուսուցման ազգային ռեեստրի վարման կարգը, *այդ թվում՝ սույն օրենքի 3.4-րդ մասի 6-րդ կետով սահմանված գործընթացում արձանագրված խախտումների տեսակները, դրանք վերացնելու ժամկետները, ինչպես նաև Ուսուցումների ազգային ռեեստրում լրացուցիչ կրթական ծրագիր իրականացնողի բազաների (հաշվառման համարանիշի) օգտագործումը ապաակտիվացնելու և վերաակտիվացնելու կարգը,* ~~*ստեղծում* ուսուցման ազգային ռեեստրը՝ ընտրված համակարգող կազմակերպության հետ պայմանագրային պատվիրակման հիման վրա.~~

9.~~4~~6) սահմանում է լրացուցիչ ~~*ուսումնառության*~~ *կրթության* վկայականի, վկայականի ներդիրի եւ հավաստագրի, հավաստագրի ներդիրի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման եւ պահպանման կարգը.

9.~~5~~7) երաշխավորում է լրացուցիչ կրթության մոդուլային ծրագրերը.

9.~~6~~8) հաստատում է ոչ ֆորմալ եւ ինֆորմալ *ուսումնառության* արդյունքների գնահատում եւ ճանաչում անցկացնող գնահատողների ցանկը.

9.~~7~~9) հաստատում է ոչ ֆորմալ եւ ինֆորմալ *ուսումնառության* արդյունքների գնահատում եւ ճանաչում անցած անձանց ցանկը եւ վավերացնում տրամադրվող հավաստագիրն ու ներդիրը.

~~9.8) սահմանում եւ հաստատում է ոչ ֆորմալ եւ ինֆորմալ *ուսումնառության* արդյունքների գնահատման հիմքերը, գնահատում իրականացնելու կենտրոններին ներկայացվող պահանջները եւ կողմերի իրավահարաբերություններն ապահովող պայմանագրի հիմնական պայմանները.»։~~

9.10)սահմանում է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման գործընթացի կազմակերպման, իրականացման, ճանաչման եւ հավաստագրման ընթացակարգային և մեթոդաբանական փաստաթղթերը, գնահատողներին և գնահատում իրականացնելու կենտրոններին

ներկայացվող պահանջները, կողմերի իրավահարաբերություններն ապահովող պայմանագրի հիմնական պայմանները, գործընթացի կողմերի գործառույթները, լիազորությունները եւ պարտականությունները:

12.1) սահմանում է հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, հաշվառման և պահպանման կարգերը:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 7. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված 26-րդ հոդվածի 3.7-րդ մասի 2-րդ կետը ուժի մեջ են մտնում սկսած 2023 թվականի սեպտեմբերի 1-ից՝ ըստ ոլորտների (բնագավառների) կառավարության սահմանած ժամանակացույցին համապատասխան, բայց ոչ ուշ քան 2025 թվականի հունվարի 1-ը:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ***ուսումնառության*** արդյունքների գնահատման, ճանաչման եւ հավաստագրման գործընթացը ներդրվում է համաձայն կառավարության հաստատած գործողությունների պլանի եւ ժամանակացույցի՝ սկսած ***2024 թվականի հունվարի մեկից***՝տարեկան առնվազն 3 մասնագիտության (զբաղմանքի) համար:

3. Սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նոր խմբագրությամբ օրենքի 36-րդ եւ 37-րդ հոդվածներով սահմանված ենթաօրենսդրական ***նորմատիվ*** իրավական ակտերի ընդունման ժամկետ սահմանել մինչեւ ***2023 թվականի ~~դեկտեմբերի 30~~հունիսի 1-ը:***

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ (Պ-104-30.11.2021-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	1. **«Կրթության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենիքի նախագծի (այսուհետև՝ նախագիծ) 3-րդ հոդված, առաջին մաս**	1.11-րդ կետում «արդյունքները գնահատված և ճանաչված անձանց, ինչպես նաև լրացուցիչ կրթական ծրագրերի, դասընթացների ընթացքի մոնիտորինգ իրականացնող, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքները գնահատող անձանց» բառերը փոխարինել «արդյունքների գնահատում և ճանաչում անցած անձանց, ինչպես նաև լրացուցիչ կրթական ծրագրերի, դասընթացների ընթացքի նկատմամբ մոնիտորինգ իրականացնող, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքները գնահատող և ճանաչող անձանց (կազմակերպություն-ների)» բառերով և «շտեմարան» բառից հետո լրացնել «անհատական տվյալների պաշտպանության օրենսդրության պահանջներին համապատասխան» բառերով:	Ընդունվել է մասնակի. Ոֆիֆ ուսումնառության արդյունքները ճանաչում է լիազորր մարմինը՝ գնահատողիների միասնական եզրակացության հիման վրա, ոչ թե գնահատողը, ինչպես նաև կազմակեր-պությունը գնահատող չի կարող լինել:	Ընդունվել է
2	ՀՀ կառավարություն	**Նախագծի 3-րդ հոդված, առաջին մաս**	«ուսուցման ազգային ռեեստր» հասկացության առաջարկվող ձևակերպումից բաց է մնում կրթական հիմնական ծրագրերի ռեգիստրի խնդիրը.	Չի ընդունվել, հարցը կարգավորվում է այլ օրենքով	Ընդունվել է
3	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	**Նախագծի 3-րդ հոդված, առաջին մաս**	Սահմանել «ուսումնառություն» հասկացությունը և «ինֆորմալ ուսուցում» բառերը ամբողջ օրենքում փոխել «ինֆորմալ ուսումնառություն» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է
4	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	**Նախագծի 3-րդ հոդված, առաջին մաս**	1.13-րդ կետից հանել կրթության հետական կառավառման լիազոր մարմնի կողմից բառերը, լիազորությունը սահմանել 5-րդ հոդվածում՝ որպես ԼՄ-ին պատվիրակող նորմ: Գաղափարը պահպանելու համար «փաստը» բառից հետո	Ընդունվել է	Ընդունվել է

			լրացնել «պաշտոնապես» բառը:		
5	ՀՀ կառավարություն	**Նախագծի 3-րդ հոդված, առաջին մաս, 2-րդ և 4-րդ պարբերություն**	1.12-րդ և 1.14-րդ կետերի տեղերը փոխել.	Ընդունվել է	Ընդունվել է
6	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված, առաջին մաս, 5-րդ պարբերություն	1.15-րդ կետը «անձի» բառից հետո լրացնել «փաստացի» բառով	Ընդունվել է	Ընդունվել է
7	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված, առաջին մաս, 3.1. կետի առաջին նախադասություն.	նախադասությունը փոխարինել. «Լրացուցիչ կրթություն (ուսուցում) կարող է իրականացնել ուսուցման ազգային ռեեստրում՝ որպես ուսուցում իրականացնող գրանցված ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ:» նախադասությամբ.	Ընդունվել է	Ընդունվել է
8	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան		«Ուսումնական հաստատությունները» բառերից հետո լրացնել. « և միջազգային հավատարմագրում ունեցող ուսումնական կենտրոնները», իսկ առանձ նախապայմանների բառը՝ «պարզեցված ընթացակարգով» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
9	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված, առաջին մաս, 3.2. կետի	Սահմանել «մուտքային պահանջ» և «պատվիրատու» հասկացությունները	Սահմանվել է	Ընդունվել է
10	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված, առաջին մաս, 3.3. կետի	«համակարգում» բառից հետո լրացնել «կրթության պետական կառավարման լիազոր մարմինը» բառերով և «ինչպես նաև» բառերը փոխարինել «իսկ» բառով.	Չի ընդունվել Գործընթացում բոլոր որոշումների կայացումը պատկանում է ԼՄ-ին, սակայն տեխնիկական աշխատանքների կազմակերպումը և գործընթացների համակարգումը նախատեսվել է	Ընդունվել է

				իրականացնել ընտրված կազմակերպությունով: Վերջինս ոչ մի ինքնուրույն լիազորություն չունի որոշումների հարցում:	
11	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված, առաջին մաս, 3.4. կետի 1-ին կետում	1-ին կետում «ձեռք բերելու ենթակա կարողությունների, գիտելիքների ու հմտություն ների» բառերը փոխարինել «կարողություններ, գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու» բառերով.	Չի ընդունվել,	Ընդունվել է
12	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան		«Կազմակերպության պատասխանատուի (գործատուի)» բառերը փոխարինել «պատվիրատու» բառով	Ընդունվել է	Ընդունվել է
13	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված, առաջին մաս, 3.4. կետի 6-րդ կետում	6-րդ կետում «մասնագետների» բառը փոխարինել «մասնագետներից ձևավորված մասնագիտական խմբի» բառերով.	Ընդունվել է	Ընդունվել է
14	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան		Լրացնել 3.6-րդ և 3-8-րդ մասեր. «3.6. Լրացուցիչ կրթական ծրագրի կազմակերպման կամ իրականացման գործընթացում սույն հոդվածի 3.4-րդ մասի 6-րդ կետով սահմանված գործընթացում խախտումներ արձանագրվելու դեպքում լրացուցիչ կրթական ծրագիր իրականացնողը պարտավոր է սահմանված ժամկետում վերացնել արձանագրված խախտումը: Եթե սահմանված ժամկետում խախտումը չի վերացվում, ապա մինչև երկու տարի ժամանակով ապաակտիվացվում է Ուսուցումների ազգային ռեեստրում լրացուցիչ կրթական ծրագիր իրականացնողի բազաների (հաշվառման համարանիշի) օգտագործումը: Սույն մասի կիրառման համար հիմք հանդիսացող խախտումների տեսակները, դրանք վերացնելու ժամկետները, ինչպես նաև Ուսուցումների ազգային ռեեստրում լրացուցիչ կրթական ծրագիր իրականացնողի բազաները (հաշվառման համարանիշի) օգտագործումը ապաակտիվացնելու և վերաակտիվացնելու	Ընդունվել է	Ընդունվել է

			կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: 3.7. Սույն հոդվածի 3.1-րդ, 3.2-րդ եւ 3.4-րդ մասով սահմանված փուլերը պարտադիր են այն կազմակերպությունների եւ մասնակիցների (ունկնդիրների) համար, ովքեր՝ 1) ցանկանում են ստանալ պետական նմուշի միասնական փաստաթուղթ, 2) ցանկանում են կատարել այնպիսի աշխատանք կամ զբաղեցնել այնպիսի պաշտոն, որի համար օրենքներով սահմանված է մասնագիտական ուսուցման վկայական կամ դրան հավասարեցված փաստաթուղթ ունենալ պահանջը: 3.8. Պետական նմուշի միասնական փաստաթուղթ (վկայական եւ ներդիր) ստացած անձինք գրանցվում են ուսուցման ազգային ռեեստրում:»:		
15	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված, առաջին մաս, 3.4. կետի 7-րդ կետում	«ներդիրները համարվում են» բառերը փոխարինել «ներդիրը համարվում է» բառերով, իսկ «անհատական» բառը՝ «անձնական» բառով:	Ընդունվել է, հանվել է	Ընդունվել է
16	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի	Տարանջատել՝ լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպ-ման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և Ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: 1-ին կարգի հաստատումը սահմանել 26.-րդ հոդվածում, իսկ 2-րդ կարգինը՝ 26.1.-րդ հոդվածում:	Ընդունվել է	Ընդունվել է
17	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 26.1-ին հոդված	ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման ընթացակարգը սահմանվելու են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից: Հաշվի առնելով, որ օրենքով նախատեսվում է, որ վերը նշված կարգը սահմանվելու է ՀՀ կառավարությունը, իսկ նախագծով՝ կրթության	Չի ընդունվել. Մի դեպքում ընդհանուր կարգն է, մյուս դեպքում՝ ընթացակարգը: Վերջինս լրացնում և մանրամասնում է գործընթացը, այդ թվում՝ մեթոդաբանական և	Ընդունվել է

			պետական կառավարման լիազորված մարմինը՝ անհրաժեշտ է վերոնշյալ կարգավորումները խմբագրել՝ նորմատիվ իրավական ակտի ներքին հակասություններից խուսափելու համար:	աշխատանքային	
18	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մաս	«գործընթաց է» բառերից հետո շարադրել հետևյալ խմբագրությամբ. «որը կազմակերպվում, իրականացվում և հավաստագրվում է սույն օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դրույթներով:» Նախկին ձևակերպումը տեղափոխել հոդված 5, որպես ԼՄ պատվիրակող նորմ:		Ընդունվել է
19	ՀՀ կառավարություն ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 26.1-ին հոդված, 3-րդ մասից	հանել «(կարողություններ)», «(որոնք)» և «(բավարար են)» բառերը, «բավարար նախապայման» բառերը փոխարինե «հիմք» բառով, իսկ վերջին նախագասությունը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
20	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 26.1-ին հոդված, 5-րդ մասից	«ճանաչումը» բառից հետո լրացնել «և հավաստագրումը» բառերը, 1-ին կետից հանել. «որը ներառում է անհատի փորձառության որոշարկում՝ ինքնագնահատման եւ խորհրդատվության միջոցով,» 2-րդ և 3-րդ կետրից հանել՝ «՝ թեստավորման եւ հարցազրույցի միջոցով. 3) անձի փաստացի. բանավոր հարցումների, աշխատանքի կատարման ընթացքի դիտարկման, կատարած աշխատանքի արդյունքի քննման (վերլուծության) միջոցով.», 4-րդ կետից հանել «՝ թեկնածուի կարողությունների եւ հմտությունների ճանաչում, որը հավաստվում է գնահատողների ընդհանրական եզրակացության հիման վրա,» 5-րդ կետից հանել «ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսուցման արդյունքները արդյունքների գնահատվածում եւ դրական եզրակացություն ստացած անձին:»	Ընդունվել է	Ընդունվել է

21	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 26.1-ին հոդված, 5-րդ մասից	ա. 1-ին նախադասության «գնահատումը և ճանաչումը» բառերը փոխարինել «գնահատումը, ճանաչումը և հավաստագրումը» բառերով, բ. 5-րդ կետում «արդյունքները գնահատված» բառերը փոխարինել «արդյունքների գնահատում», իսկ «համարվում են» բառերը՝ «համարվում է» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
22	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 26.1-ին հոդված, 7-րդ մաս	«ենթաօրենսդրական» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «նորմատիվ» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
			«և (կամ)» շաղկապը, անհրաժեշտ է նախագծի ամբողջ տեքստում կիրառված «և (կամ)» շաղկապը փոխարինել «կամ» շաղկապով		Ընդունվել է
23	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 26.1-ին հոդված, 8-րդ մաս	«ռեեստր» բառից հետո հանել «անհատական տվյալների պաշտպանության օրենսդրության պահանջներին համապատասան» բառերը :		Ընդունվել է
24	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 4, 2-րդ կետ	6.2-րդ կետը «ուսուցման» բառը փոխարինել «ուսումնառության» բառով,	Ընդունվել է	Ընդունվել է
25	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 5-րդ հոդվածի 9.3-րդ կետը	Լրացնել, խմբագրել և վերաթվարկել կետերի համարակալումը 9.1) հավաստում է անձի կարողությունների եւ սահմանված որոշակի համեմատելի չափանիշների համապատասխանության փաստը՝ սույն օրենքով սահմանված ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման գործընթացների միջոցով, 9.5) հաստատում է ուսուցման ազգային ռեեստրի վարման կարգը, այդ թվում՝ սույն օրենքի 3.4-րդ մասի 6-րդ կետով սահմանված գործընթացում արձանագրը-վածխախտումների տեսակները, դրանք վերացնելու ժամկետները, ինչպես նաև Ուսուցումների ազգային ռեեստրում լրացուցիչ կրթական ծրագիր իրականացնողի բազաների	Ընդունվել է	Ընդունվել է

			(հաշվառման համարանիշի) օգտագործումը ապաակտի-վացնելու և վերաակտիվացնելու կարգը, 9.10)սահմանում է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման գործընթացի կազմակերպման, իրականացման, ճանաչման եւ հավաստագրման ընթացակարգային և մեթոդաբանական փաստաթղթերը, գնահատողներին և գնահատում իրականացնելու կենտրոնն-ին ներկայացվող պահանջները, կողմերի իրավահարաբերություններն ապահովող պայմանագրի հիմնական պայմանները, գործընթացի կողմերի գործառույթները, լիազորությունները եւ պարտականությունները:		
26		Նախագծի 5-րդ հոդված	Լրացնել 12.1) սահմանում է հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, հաշվառման և պահպանման կարգերը:»:	Ընդունվել է	Ընդունվել է
27	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 7-րդ հոդված վերաթվարկել և լրացնել	Հոդված 7. Անցումային դրույթներ 1. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված 26-րդ հոդվածի 3.7-րդ մասի 2-րդ կետը ուժի մեջ են մտնում սկսած 2023 թվականի սեպտեմբերի 1-ից՝ ըստ ոլորտների (բնագավառների) կառավարութ-յան սահմանած ժամանակացույցին համապատասխան, բայց ոչ ուշ քան 2025 թվականի հունվարի 1-ը: 2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատ-ման, ճանաչման եւ հավաստագրման գործընթացը ներդրվում է համաձայն կառավարության հաստատած գործողութ-յունների պլանի եւ ժամանակացույցի՝ սկսած 2024 թվականի հունվարի մեկից՝ տարեկան առնվազն 3	Ընդունվել է	Ընդունվել է

			մասնագիտության (զբաղմանքի) համար: 3. Սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նոր խմբագրությամբ օրենքի 36-րդ եւ 37-րդ հոդվածներով սահմանված ենթաօրենսդրական նորմա-տիվ իրավական ակտերի ընդունման ժամկետ սահմանել մինչեւ 2023 թվականի հունիսի 1-ը:		
28	ՀՀ կառավարություն	Նախագծի ամբողջ տեքստում	«ինֆորմալ» ուսուցում» բառերը փոխարինել «ինֆորմալ ուսումնառություն» բառերով		Ընդունվել է